ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2
«ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ 27.03.2017թ. ԹԻՎ 220-Ա ՀՐԱՄԱՆՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33)

10 ապրիլի 2017թ,
ժամը 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Խ.Սիսակյան — ՏՏԾ պետ

Հանձնաժողովի անդամներ՝

Հ.Նիկողոսյան — ԱԱՏ կենտրոնի ղեկավար

Վ.Ալթունյան — ԱԱՏ կենտրոնի ինժեներ

Հանձնաժողովի քարտուղար՝

Մ. Եսայան — Պ և ԳՀԾ մասնագետ

Հանձնաժողովի անդամ Ա.Ղազարյանը գտնվում էր գործուղման մեջ և նիստին չմասնակցեց:

ՕՐԱԿԱՐԳ

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված՝ 434 800 (չորս հարյուր երեսունչորս հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:

Հրապարակվեց հայտ ներկայացրած մասնակցի անվանումը և գտնվելու հասցեն՝

«Հունան Մանթաշյան Սեվանի» ԱՁ, ՀՀ, ք. Նոյեմբերյան, Շահումյան փող. 51 տուն

ա) Վերոնշյալ կազմակերպության կողմից ներկայացված ծրարը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվեց որոշում՝ կողմ-3, դեմ-0:

բ) Վերոնշյալ կազմակերպության կողմից ներկայացված ծրարում առկա էին հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվեց որոշում՝ կողմ-43, դեմ-0:

Հայտարարվեց մասնակցի գնային առաջարկը՝

«Հունան Մանթաշյան Սեվանի» ԱՁ՝ 434 800 (չորս հարյուր երեսունչորս հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:

Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Հունան Մանթաշյան Սեվանի» ԱՁ -ն:
2. 1-ին տեղը զբաղեցրած մասնակցին ծանուցել սույն արձանագրությունը ուղարկելու միջոցով՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ ընթացակարգի հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

3. Հանձնարարարել գնման համակարգողին ներկայացնել հարցում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի 2.3 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:
4. Հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան 17.04.2017թ ժամը 14.30:

Խ.Սիսակյան — Հանձնաժողովի նախագահ

Հ.Նիկողոսյան — Հանձնաժողովի անդամ

Վ.Ալթունյան — Հանձնաժողովի անդամ

Մ. Եսայան — Հանձնաժողովի քարտուղար